Հաստատված է

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2022թ. նոյեմբերի 3-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ե. Սերոբյան

*Հիմք՝ ՇՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի*
*2021թ. Սեպտեմբերի 30-ի նիստում հաստատված*
*«ՇՊՀ հիմնադրամի ֆակուլտետի» կանոնադրություն*

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:

1.2. Յուրաքանչյուր ֆակուլտետ սույն օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է ՇՊՀ գիտական խորհրդում:

1.3. Սույն կանոնադրությունը հաստատվում է ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

1.5.Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ՇՊՀ Գիտական խորհրդի քննարկմամբ և ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

1.6. Ֆակուլտետը կառուցվածքային ստորաբաժանում է, որի կարգավիճակը և իրավասությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՇՊՀ կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերով:

1.7. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

հայերեն՝ _____
ռուսերեն՝ _____
անգլերեն՝ _____

1.8. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ _____

1.9. Ֆակուլտետն ունի իր անվանմամբ կնիք, սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ և խորհրդանիշ:

## 2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ֆակուլտետը ՇՊՀ գիտակրթական գործունեություն ծավալող հիմնական կառուցվածքային ստորաբաժանում է, որը համակարգում է բարձրագույն կրթության մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը:

2.2. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունել որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՇՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերի:

2.3. Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և գիտատեխնիկական աշխատանքներից՝ ՇՊՀ ռեկտորին է ներկայացնում իր հաստիքացուցակի նախագիծը՝ հաստատված ֆակուլտետի խորհրդի նիստում.

2.3.1. Ֆակուլտետի հաստիքացուցակը ֆակուլտետի խորհրդում հաստատվում է ֆակուլտետի խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: ֆակուլտետի խորհրդի նիստը տեղի է ունենում նոր ուսումնական տարվա առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում:

**(Ուժը կորցրած է ճանաչվել գիտական խորհրդի 03.11.2022թ. նիստի թիվ 02/3 որոշմամբ )**

2.4. Ֆակուլտետը պետք է ունենա զարգացման հնգամյա ծրագիր (որը քննարկվում և հաստատվում է ՇՊՀ-ի Գիտական խորհրդում), ծրագրին համապատասխան ամենամյա աշխատանքային պլան-ժամանակացույց (որը քննարկվում և հաստատվում է ֆակուլտետային խորհրդի նիստում):

**(Լրացվել է գիտական խորհրդի 03.11.2022թ. նիստի թիվ 02/3 որոշմամբ )**

## 3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՇՊՀ և ֆակուլտետի

կանոնադրությունների միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

3.2. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը (այսուհետ՝ ՖԽ) և դեկանը: Առնվազն հազար ուսանողական համակազմ ունեցող ֆակուլտետում դեկանը կարող է ունենալ տեղակալ:

3.3. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ՖԽ-ն է, որը բաղկացած է ի պաշտոնե, նշանակովի /համապատասխան ոլորտի գործատուներ և շրջանավարտներ/ և ընտրովի անդամներից:

Ի պաշտոնե և նշանակովի անդամների թիվը չի կարող գերազանցել ՖԽ-ի կազմի հիսուն տոկոսը: Խորհրդի անդամների թիվը առաջարկում է ֆակուլտետի դեկանը, որը ամրագրվում է ֆակուլտետի կանոնադրության մեջ: Խորհրդի կազմում ընդգրկվում են.

3.3.1. ի պաշտոնե՝ ֆակուլտետի դեկանը (նախագահ), դեկանի տեղակալները (եթե կան), ֆակուլտետի արհկոմի նախագահը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները:

3.3.2. ֆակուլտետի դեկանի նշանակմամբ և ամբիոնների վարիչների համաձայնությամբ՝ համապատասխան ոլորտի մեկ գործատու և մեկ շրջանավարտ.

3.3.3. ընտրովի անդամներ՝ ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական աշխատակիցները /համամասնության սկզբունքով/, սովորողները:

Ա. Ֆակուլտետի ամբիոնների ՊԴ կազմի ընտրությունը կատարվում է՝ համաձայն ՇՊՀ ամբիոնի օրինակելի կանոնադրության.

Բ. ՖԽ-ի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը.

3.4. ՖԽ-ի լիազորությունների ժամկետը հինգ տարի է, որի ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:

3.5. Ֆակուլտետի խորհուրդը՝

3.5.1.ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.

3.5.2. ընդունում է որոշումներ զարգացման հնգամյա ծրագրի, ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ:

**(Լրացվել է գիտական խորհրդի 03.11.2022թ. նիստի թիվ 02/3 որոշմամբ )**

3.5.3. քննարկում է ֆակուլտետի ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին ամենամյա հաշվետվությունները և գնահատում ամբիոնների գործունեությունը.

3.5.4. ըստ սահմանված կարգի՝ ամբիոնի վարիչը ՖԽ-ում ներկայացնում է ամենամյա հաշվետվություն: ՖԽ-ում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչի աշխատանքային անհամապատասխանության, նրա նկատմամբ անվստահության և ՇՊՀ գիտական խորհրդին՝ ամբիոնի վարիչի պաշտոնանկության (ՇՊՀ գիտական խորհրդին անդամակցության դեպքում նաև՝ լիազորությունների դադարեցման) ներկայացման հարցը:

Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը կայացվում է փակ գաղտնի քվեարկությամբ: ՖԽ-ի անդամների ձայների թվաքանակի կեսից ավելին կողմ լինելու հիման վրա խորհուրդը իրավասու է գիտական խորհրդին առաջարկություն ներկայացնել ամբիոնի վարիչի պարտականությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ.

3.5.5. ՇՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը փակ գաղտնի քվեարկությամբ ընդունելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:

ՇՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատելու դեպքում հնգօրյա աշխատանքային ժամկետում հրավիրվում է ՖԽ-ի նոր նիստ՝ ռեկտորի նախագահությամբ: Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին խորհրդի նոր որոշումը իրավազոր է, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել ֆակուլտետի խորհրդի անդամների թվաքանակի կեսից ավելին:

Ռեկտորը երկրորդ անգամ հարցը քննարկում է գիտական խորհրդում, որի կայացրած որոշումը համարվում է վերջնական:

3.5.6. քննարկում է կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները.

3.5.7. քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված բողոքները.

3.5.8. լսում և քննարկում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով համապատասխան փոփոխություններ և ներկայացնում ՇՊՀ-ի գիտական խորհրդի գնահատմանը.

3.5.9. սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդների թեկնածությունների քննարկումը և առաջադրում է ՇՊՀ-ի գիտական խորհրդի ընտրությանը.

3.5.10. ՇՊՀ-ի գիտական խորհրդի հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա քննարկում, մշակում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի կանոնադրությունը.

3.5.11.Ֆակուլտետի խորհուրդը բոլոր ամբիոններից առաջադրած թեկնածուներից 3-ին ընտրում և առաջադրում է ՇՊՀ Գիտական խորհրդին՝ նրանցից Հոգաբարձուների խորհրդի անդամ(ներ) ընտրելու համար:

**(Փոփ. է գիտական խորհրդի 30.09.2021թ. թիվ 1/5 որոշմամբ )**

Ֆակուլտետի խորհրդի յուրաքանչյուր անդամ ամբիոններից առաջադրված բոլոր թեկնածուներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է երեքին:

ՖԽ-ում ընտրված են համարվում այն թեկնածուները, ովքեր հավաքում են առավելագույն ձայներ: Հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի ընտրություն՝ նույն սկզբունքով:

3.5.12. Ընտրում է ՇՊՀ-ի գիտական խորհրդի անդամներ ֆակուլտետի ամբիոնների կողմից առաջադրված գիտական աստիճան կամ կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի երեքական ներկայացուցիչներից:

Ֆակուլտետի խորհրդի յուրաքանչյուր անդամ առանձին քվեաթերթիկով գաղտնի կերպով ընտրում է յուրաքանչյուր ամբիոնից առաջադրված թեկնածուներից մեկին:

Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքում է առավելագույն ձայներ: Նույն ամբիոնից հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի ընտրություն՝ նույն սկզբունքով:

3.5.13. Անհրաժեշտության դեպքում իր կազմից ձևավորում է մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովներ.

3.5.14. ՇՊՀ ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները ՇՊՀ գիտական խորհրդում հաստատելու համար.

3.5.15. Առաջարկություն է ներկայացնում միջազգային, հանրապետական և ՇՊՀ պատվավոր կոչումներ, մրցանակներ, պարգևներ շնորհելու, ուսանողական անվանական կրթաթոշակներ նշանակելու վերաբերյալ.

3.5.16. Լուծում է ՇՊՀ կանոնադրությունից, ֆակուլտետի կանոնադրությունից և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության վերաբերյալ այլ հարցեր:

3.6. Ուսումնական տարվա ընթացքում խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ութ անգամ, յուրաքանչյուր կիսամյակում՝ առնվազն 4 անգամ:

3.7. ՖԽ-ի նախագահը դեկանն է, ով հրավիրում է խորհրդի նիստերը:

Դեկանի ընտրության և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է ռեկտորը կամ ՇՊՀ պրոռեկտորներից մեկը՝ ռեկտորի հանձնարարությամբ:

Դեկանի պաշտոնանկության հարցի քննարկման նպատակով հրավիրվող նիստը նախագահում է ռեկտորը:

3.8. ՖԽ-ի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար) ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.9. Դեկանի կողմից խորհրդի նիստը հրավիրելու անհնարինության դեպքում այն հրավիրվում է դեկանի ժամանակավոր պաշտոնակատարի կամ ՇՊՀ ռեկտորի կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ ՇՊՀ պրոռեկտորներից մեկի կողմից:

3.10.Քարտուղարի բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

3.11. ՖԽ-ի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի օրակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

3.12. ՖԽ-ի նիստն իրավազոր է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (բաց քվեարկությամբ, եթե խորհուրդն այլ որոշում չի կայացրել), եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ ՇՊՀ կամ ֆակուլտետի կանոնադրություններով այլ

բան նախատեսված չէ: Ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:

Քվորումի բացակայության դեպքում խորհրդի նիստը հետաձգվում է՝ նույն օրակարգով:

3.13. ՖԽ-ի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը, պրոռեկտորները, նաև հրավիրյալ մասնակիցները:

3.14. ՖԽ-ի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստի արձանագրությունը (երկու օրինակով) և արձանագրության յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կայացված որոշումները (երկու օրինակով) կազմվում են խորհրդի նիստի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման օրը, քվեակազմը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, իսկ որոշումները՝ նիստը նախագահողը: Նիստը նախագահողը և քարտուղարը պատասխանատու են արձանագրությունը և որոշումները ճիշտ կազմելու համար: Խորհրդի նիստերի արձանագրության և որոշումների օրինակներից մեկը պահվում է քարտուղարի մոտ, իսկ մյուս օրինակը՝ ՇՊՀ գիտական քարտուղարի մոտ: Արձանագրությունը և ընդունված որոշումները յոթ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ՇՊՀ կայքէջում:

3.15. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասության սահմաններում և ՇՊՀ կանոնադրության համաձայն: Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք:

3.16. Ֆակուլտետի դեկանի պաշտոնը ընտրովի է:

3.17. Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել այն անձը, ով ունի գիտական աստիճան, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ:

Դեկանն ընտրվում է բաց մրցույթով, գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստանում է գիտական խորհրդի անդամների ձայների կեսից ավելին: ՇՊՀ-ի ռեկտորը ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին նշանակում է պաշտոնում և սահմանված կարգով կնքում է աշխատանքային պայմանագիր:

Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավել, քան երկու ժամկետ անընդմեջ՝ անկախ ֆակուլտետի վերանվանումից կամ վերամիավորումից:

3.18. Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է ԺՊ և կազմակերպում դեկանի նոր ընտրություններ՝ ամենաուշը 1 տարվա ընթացքում:

3.19. Ֆակուլտետի դեկանի տեղակալի (եթե կա) պաշտոնը նշանակովի է: Ֆակուլտետի դեկանի տեղակալ կարող է նշանակվել տվյալ ֆակուլտետի դասախոսներից այն անձը, ով ունի գիտական աստիճան կամ կոչում, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն 3 տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ:

3.20. Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՇՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված՝ ՇՊՀ դեկանի ընտրության կանոնակարգի համաձայն:

3.21. Ֆակուլտետի դեկանը՝

3.21.1. ղեկավարում է կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ ուղղություններով ֆակուլտետի գործունեությունը.

3.21.2. ապահովում է ՇՊՀ մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3.21.3. ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի թեկնածությունը (եթե կա) և ֆակուլտետի խորհրդի կազմը.

3.21.4. սահմանված կարգով ռեկտորին է ներկայացնում ուսանողներին հեռացնելու, վերականգնելու, կուրսից կուրս փոխադրելու, փոխատեղման /ռոտացիա/, կրթաթոշակի, զեղչի վերաբերյալ առաջարկություններ.

3.21.5. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն և ֆակուլտետի կանոնադրություններով նախատեսված այլ լիազորություններ:

3.22. ՖԽ-ի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են դեկանատի խորհրդի նիստում, որին մասնակցում են դեկանը, դեկանի տեղակալը (եթե կա), ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչները, դեկանատի գործավարը /ով հանդիսանում է դեկանատի խորհրդի քարտուղարը/, ֆակուլտետի արհկոմի նախագահը, ուսանողական խորհրդի և ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահները:

Դեկանատի խորհրդի նիստերն արձանագրվում են:

3.23. Դեկանատի խորհրդի նիստում հարցերը քննարկվում են դեկանի առաջարկով:

## 4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական ու օժանդակ այլ ստորաբաժանումներից /յուրաքանչյուր ֆակուլտետ լրացնում է ըստ իր փաստացի կառուցվածքի/:

4.2. Ամբիոնները (ներառյալ լաբորատորիաները, կաբինետները) ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են: